
**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԵՎԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ
(1923-1927 ԹԹ.)***

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Հարևան ոչ խորհրդային պետությունների հետ Խորհրդային Հայաստանի առևտրատնտեսական առնչությունների պատմության ուսումնասիրությունն իրենից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում. առաջին անգամ, բացարձակապես արխիվային փաստաթղթերի ուսումնասիրմամբ վեր են հանվել այդ հարաբերությունները: Թեման այսօր էլ արդիական է, քանզի Իրանի հետ այսօր էլ շարունակվում են ակտիվորեն զարգանալ առևտրատնտեսական հարաբերությունները: Հավատացած ենք, որ ապագայում Թուրքիայի հետ երկկողմ առևտրատնտեսական հարաբերություններ հաստատելիս մեծապես կարող է օգնել անցյալի փորձը:

Թեմայի ուսումնասիրման ժամանակագրական շրջանակները պայմանավորված են այն հանգամանքով, որ մինչև 1927 թ. Անդրկովկասում գոյություն ուներ արտաքին առևտրի կոմիսարիատ, իսկ 1927 թ. հետո այն վերափոխվեց Խորհրդային Միության արտաքին առևտրի Անդրկովկասյան լիազոր ներկայացուցչության:

Մտնելով ԽՍՀՄ կազմի մեջ՝ ՀՍԽՀ իշխանությունները շարունակեցին Պարսկաստանի և Թուրքիայի հետ ունենալ առևտրատնտեսական հարաբերություններ, ինչը մեծապես օգնում էր նորաստեղծ հանրապետության տնտեսության զարգացմանը: Սա կարևոր էր նաև այն առումով, որ մինչև ԽՍՀՄ կազմի մեջ մտնելը՝ 1921-1922 թթ., այդ հարաբերությունների միջոցով զգալիորեն բարելավվել էր երկրի սոցիալտնտեսական վիճակը:

Թուրքիայի հետ, ինչպես վերը նշվեց, առևտրատնտեսական հարաբերություններ էին հաստատվել դեռևս 1921 թ., և դա ամրագրվել էր նաև 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում ստորագրված թուրք-անդրկովկասյան պայմանագրի 17 և 18 հոդվածներում: Մեծ նշանակություն ունեցավ նաև Ալեքսանդրապոլում 1922 թ. սեպտեմբերին հայ-թուրքական մաքսատան բացումը, որը նպաստեց երկկողմ առևտրի և ապրանքաշրջանառության զարգացմանը: Սրանից զատ՝ 1920-ական թվականների երկրորդ կեսին սկսում է աշխատել նաև Մարգարայի մաքսատունը, իսկ դա նշանակում էր, որ Խորհրդային Հայաստանը, անշուշտ, նաև՝ ԽՍՀՄ-ը, մեծ նշանակություն էին տալիս Թուրքիայի հետ առևտրին, ըստ այդմ՝ նրանց միջև ակտիվ ապրանքաշրջանառություն էր իրականացվում: Հայ-

* Հոդվածը ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված ֆակուլտետային գիտաժողովում հեղինակի կարդացած զեկուցման վերամշակված տարբերակն է:

թուրքական առևտրատնտեսական առնչություններում կարեվոր դերակատարում ունեցող հատկապես Հայպետառը, որը 1923 թ. փետրվարի 10-ին վերանվանվեց Հայառ:

1923 թ. հունվարի 8-ին Հայպետառը Կարսում ներկայացուցչություն է ստեղծում, և այդ մարմնի ղեկավարը իրավունք է ստանում ողջ Թուրքիայի տարածքում կանխիկ արտարժույթով կամ ապրանքափոխանակությամբ իրացնելու Հայպետառի ապրանքները: Դրանով երկրորդն առևտրատնտեսական հարաբերությունների հիմքում փաստորեն դրվում էին այն նույն սկզբունքները, որոնք գործում էին 1921-1922 թթ.: Թուրքիայում ներկայացուցչության ղեկավարի կնքած պայմանագիրը ուժ ունեցող ամենաազդեցիկը մեկ ամիս ժամկետով, և դրանով նախատեսվում էր ՀՍԽՀ-ից Թուրքիա ապրանքներ արտահանել և ներմուծել¹:

Հայպետառը Թուրքիայում իր գործունեությունն իրականացնում էր հիմնականում մասնավոր անձանց միջոցով և պայմանագրեր էր ստորագրում Խորհրդային Հայաստանի սահմանամերձ թուրքական շրջանների վաճառականների հետ:

Կարսում Հայպետառի ներկայացուցիչը 1923 թ. հունվարի 30-ին Երևան ուղարկած իր զեկույցում նշում էր ՀՍԽՀ սահմանակից թուրքական շրջանների հետ իրականացվող առևտրի ոլորտում առկա խնդիրների մասին: Ի մասնավորի ասվում էր, որ առևտրին մեծ վնաս է հասցնում հատկապես մաքսանենգությունը՝ պատճառ դառնալով երկուստեք ապրանքների գների բարձրացման: Ներկայացուցչի կարծիքով, հայկական ապրանքների արտահանումը Սուրմալու Հայաստանի համար ուներ քաղաքական և տնտեսական մեծ նշանակություն: Հարևան շրջանների մահմեդական ազգաբնակչությունը մեծ կարևորություն էր տալիս խորհրդային հանրապետությունների հետ առևտրական կապերի հաստատմանը, քանզի քաջ հասկանում էր, որ իրենց մոտ բամբակագործության զարգացումը մեծապես կախված էր Հայաստանում և Խորհրդային Միության մյուս հանրապետություններում Հայաստանի տնտեսական ներկայացուցիչների միջոցով բամբակի սերմի գնումից և բամբակի բերքի սպառումից: Բանն այն էր, որ արտաքին աշխարհի հետ Էրզրում-Տրապիզոն գծով իրականացվող առևտրական հարաբերությունները, Հայպետառի ներկայացուցչի իրավացի կարծիքով, կարող էր կործանարար լինել նշված շրջանների տնտեսության համար: Հաշվի առնելով հենց այդ հանգամանքը, նա գտնում էր, որ Հայպետառը պարտավոր էր օգտագործել նշված հարուստ շրջանների առևտրական և տնտեսական հնարավորությունները²:

Շատ հաճախ Հայաստանում կամ Նախիջևանում բնակվող որոշ վաճառականներ անձնական նախաձեռնությամբ պատրաստականություն էին հայտնում միջնորդի դեր կատարելու թուրք վաճառականներ

¹ Տե՛ս **Գ. Ա. Բալասանյան**, Հայ-թուրքական առևտրատնտեսական հարաբերությունների պատմությունից 1923-1927 թթ., «Բանբեր Երևանի Համալսարանի». «Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն», 133.6, Եր., 2011, էջ 47-48:

² Տե՛ս նույն տեղը, էջ 48-49:

րի և Կարսում Հայպետառի ներկայացուցչության միջև: Թեև նրանց միջոցով ստորագրված պայմանագրերը ոչ միշտ էին ճիշտ ժամանակին կյանքի կոչվում, այնուամենայնիվ այդ միջնորդությունն ինքնին վերցրած ուներ դրական նշանակություն: Չէ՞ որ այդ ճանապարհով զգալիորեն ակտիվանում էին տնտեսական հարաբերությունները, իսկ սա իր հերթին նպաստում էր Հայաստանի տնտեսության զարգացմանը:

Խորհրդային Հայաստանի իշխանությունները Հայպետառի, իսկ ապա Հայառի միջոցով մեծ աշխատանք կատարեցին Թուրքիայի հետ առևտրատնտեսական հարաբերությունների հաստատման ուղղությամբ: Հայաստանին սահմանակից թուրքական շրջաններ էր արտահանվում հիմնականում ցորեն, իսկ այնտեղից ներկրվում էր բամբակ, որը օգտագործվում էր որպես ՌԽՖՍՀ-ում ապրանքափոխանակության միջոց: Թուրքական կողմը Հայաստանի հետ առևտրի հարցում շահագրգռված էր հատկապես այն պատճառով, որ թուրքական բամբակը, չունենալով ապրանքային պատշաճ տեսք, հնարավոր չէր վաճառել այլ երկրներում, իսկ Հայաստանում այն մեծ պահանջարկ ուներ:

Թուրքիայից զատ ՅՍԽՅ իշխանությունները քայլեր ձեռնարկեցին նաև հարավային հարևանի՝ Պարսկաստանի հետ առևտրատնտեսական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: Ինչպես Թուրքիայում, այստեղ ևս ակտիվ դերակատարում ունեցավ Հայառը: Պարսկաստանի հետ հայերը առևտրի անհամեմատ ավելի մեծ փորձ ունեին, քանզի, սկսած դեռևս 1918 թվականից, վերջինիս հետ ակտիվ առևտրատնտեսական հարաբերությունների մեջ էին: 1923 թ. Խորհրդային Հայաստանի իշխանությունները միջոցներ են փնտրել Պարսկաստանից 1921 թ. սկիզբ առած հացահատիկի ներկրումը շարունակելու ուղղությամբ: Սակայն այս հարցում ծագել են որոշ դժվարություններ: Բանն այն է, որ այդ տարի հացահատիկի բերքի սակավության պատճառով պարսից իշխանությունները սահմանափակել էին ցորենի արտահանումը: Ըստ այդմ՝ Հայառը Պարսկաստանից սկսեց հացահատիկ և այլ ապրանքներ ներկրել միայն 1924 թ. դեկտեմբերից:

Ինչպես այլ երկրներում, այնպես էլ Պարսկաստանում առևտուր իրականացնելու համար Հայառը որոշում է դիմել մասնավոր անձանց օգնությանը՝ նախօրոք այդ մասին տեղյակ պահելով ժողովմխորհին: Հաճախ Հայառը այդ մարդկանց խնդրում էր պարսկական քաղաքներում ճշտել ցորենի գինը, սակայն նամակում չնշել ցորեն բառը, այլ միայն՝ գինը և քանակը: Այդ հանգամանքը հիմք է տալիս եզրակացնելու, որ պարսկական կողմի հետ Հայառի վարչության իրականացրած գրագրություններն, ամենայն հավանականությամբ, ստուգվում էին: Կար մեկ այլ հանգամանք ևս. այս նույն ժամանակահատվածում Հայաստանը հացահատիկ էր ներկրում նաև ուրիշ երկրներից և ըստ երևույթին չէր ցանկանում, որ անդրկովկասյան իշխանությունները իմանային, թե ինչքան հացահատիկ է մտնում Հայաստան: Իհարկե, հեռագրերն ընթերցելու հանգամանքը չէր կարող իրականացվել առանց Մոսկվայի գիտության և ցանկության: Բացի այդ՝ Թավրիզի շուկայում

առկա էր նաև թաքուն մրցակցություն անդրկովկասյան հանրապետությունների ներկայացուցիչների միջև³:

Նրանցից յուրաքանչյուրը ցանկանում էր ձեռք բերել մեծ քանակությամբ հացահատիկ իրեն ձեռնտու գնով, ուստի շուկայից մրցակիցներից որևէ մեկի դուրս գալն զգալիորեն կթեթևացներ մնացածների գործը: Իսկ քանի որ Թավրիզի շուկայում հատկապես ակտիվ էր Հայառը, ինքնին հասկանալի է, որ այս հանգամանքը չէր կարող չանհանգստացնել մյուսներին:

1925 թ. փետրվարի 7-ին Անդրպետառի կառավարչի տեղակալ Ավագովը հեռագրում է Հայառի վարչությանը՝ տեղեկացնելով այն մասին, որ Թավրիզում Անդրպետառի լիազոր Կայֆիկը կենտրոն ուղարկած իր նամակում անհանգստություն էր հայտնում Թավրիզում Հայառի ծավալած գործունեության առթիվ, իսկ դա վկայում է այն մասին, որ Անդրպետառը քայլ էր ձեռնարկում Թավրիզի շուկայից Հայառին դուրս մղելու ուղղությամբ: Ըստ երևույթին դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Անդրպետառը ցանկանում էր Հայաստանին ցորեն մատակարարել իրեն հարմար գնով և մեծ զուևարներ վաստակել:

1925 թ. ապրիլի 15-ին Հայառի և «Ռուստրանգիտ» անունով հանդես եկող ռուս-գերմանական առևտրատրանզիտային բաժնետիրական ընկերության միջև ստորագրվում է 12 կետից բաղկացած պայմանագիր, որով «Ռուստրանգիտը» պարտավորվում էր Հայաստանին վաճառել 100.000 փութ պարսկական ցորեն: Սակայն հայկական կողմը այս պայմանագրից դժգոհ էր, քանի որ Պարսկաստանից ուղարկվող ցորենը ոչ միայն մաքուր չէր, այլև լցված էր պատռված պարկերի մեջ, ինչի հետևանքով ճանապարհին տեղի էր ունենում ցորենի մի մասի կորուստ⁴:

Նույն թվականի ապրիլի 30-ին Երևանում Պարսկաստանի գլխավոր հյուպատոս Վաիդ Օս-Սալթանի գիտությամբ Հայառի և Պարսկաստանի ֆինանսների նախարարության ադրբեջանական ներկայացուցչության ղեկավար Իոսիֆ Ջեմալ խանի միջև կնքվում է 11 կետից բաղկացած առևտրային պայմանագիր, որի համաձայն Հայաստան էր ներկրվելու 100.000 փութ ցորեն⁵, սակայն թե ինչ ընթացք ունեցավ այն, ցավոք, արխիվային փաստաթղթերից հնարավոր չէրավ պարզել:

Ամփոփելով վերը ասվածը, կարող ենք եզրակացնել, որ մեզ հետաքրքրող ժամանակահատվածում, չնայած Թուրքիայի և Պարսկաստանի հետ առևտրատնտեսական հարաբերություններում առկա դժվարություններին, հայկական կողմը, այնուամենայնիվ, արձանագրեց բավականին հաջողություններ, որոնք մեծապես նպաստեցին Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

³ Տե՛ս **Գ. Ա. Բալասանյան**, Հայ-պարսկական առևտրատնտեսական հարաբերությունների պատմությունից (1923-1925 թթ.), «Բանբեր Երևանի Համալսարանի». «Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն», 134.6, Եր., 2011, էջ 26-27:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 27-28:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 28:

ГРИГОР БАЛАСАНИЯН – *Торгово-экономические связи Советской Армении с соседними государствами (1923–1927)*. – История торгово-экономических отношений Советской Армении с соседними государствами представляет определённый интерес, не только сугубо научный, но и актуальный. С ИРИ Армения поддерживает тесные торгово-экономические связи, что же касается Турции, то при установлении с ней двусторонних экономических и торговых отношений опыт прошлого может пригодиться.

Хронологические рамки статьи обусловлены тем, что до 1927 г. Закавказская Федерация имела комиссариат внешней торговли, позднее преобразованный в Закавказское полномочное представительство внешней торговли. Войдя в состав Советского Союза, Армянская ССР продолжила торговые контакты как с Персией, так и с Турцией, что оказало положительное влияние на её экономику. Ведь ещё до образования СССР, в 1921–1922 гг., Армения торговала со своими соседями, что помогло ей улучшить своё социально-экономическое положение.

GRIGOR BALASANYAN – *The Trade Ties of Soviet Armenia with Neighboring States in 1923-1927*. – The research on the history of trade-economic relations between the Soviet Armenia and its neighbour non-Soviet republics has aroused some interest. The choice of the research chronology is associated with the fact, that before 1927 there had been a Commissariat of Foreign Trade in the Federation of Transcaucasia, and after 1927 it was reformed into the Transcaucasian Authorized Representation of the foreign trade of the Soviet Union.

The research is still relevant today; as there are close trade-economic relations between the Islamic Republic of Iran and the Republic of Armenia, as well as the past experience may be useful for establishing bilateral trade-economic relations with the Republic of Turkey.

As part of the USSR, the government of the Soviet Armenia went on keeping trade relations with Persia and Turkey, which had mostly positive influence on the economy of the young republic. This was also important before being a part of the USSR, in 1921-1922. With the help of these relations the social-economic condition of the republic has been improved.